**<<Անալիտիկ>> ՓԲԸ 2015թ. բաժնետիրոջ տարեկան ընդհանուր ժողովի**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Ընկերության 2015թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2015թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2015թ. տարեկան շահույթի /վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**<<Անալիտիկ>> ՓԲԸ 2015թ. տարեկան**

**ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ որոշման)**

**ք. Երևան** **10.06.2016թ.**

**ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

| | |
|---|---|
| Լ. Յոլյան | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար՝ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով |
| Վ. Գևորգյան | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ |
| Բ. Գյուլումյան | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ |
| Ռ. Փիլոյան | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| 7. Ս. Սարգսյան | <<Անալիտիկ>> ՓԲԸ գլխավոր տնօրեն խորհրդակցական ձայնի իրավունքով |

| | |
|---|---|
| Ժողովի նախագահ՝ | Լ.Յոլյան |
| Քարտուղար՝ | Ռ. Փիլոյան |

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Ընկերության 2015թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:

2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:

3. Ընկերության 2015թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:

4. Ընկերության 2015թ. տարեկան շահույթի /վնասի/ հաշվի հաստատում:

5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

**ՀԱՐՑ 1**

Լսվեց ընկերության 2015թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը /կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

**ՀԱՐՑ 2**

Լսվեց ընկերության վերստուգողի եզրակացությունը /կցվում է/:

Ներկայացնող-Ս. Սարգսյան

**ՈՐՈՇՎԵՑ՝**

Ի գիտություն ընդունելով վերստուգողի եզրակացությունը, ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> կետով, հաստատել <<Անալիտիկ>> ՓԲԸ 2015թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

**ՀԱՐՑ 3**

Լսվեց ընկերության 2015թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը /կցվում է/:

Զեկուցող- Ս. Սարգսյան

**ՈՐՈՇՎԵՑ՝**

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> կետով, հիմք ընդունելով ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի եզրակացությունը, հաստատել ընկերության 2015թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

**ՀԱՐՑ 4**

Լսվեց ընկերության 2015թ. շահույթի հաշվի հաստատման հարցը /տեղեկանքը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

**ՈՐՈՇՎԵՑ՝**

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> կետով, հաստատել ընկերության 2015թ. տարեկան զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 7311.0 հազ. դրամ և զուտ շահույթը՝ հաշվի առած ավելացումները /շահութաբաժնի հաշվարկի 060 տող/ 8268.0 դրամ:

**ՀԱՐՑ 5**

Լսվեցին ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցերը /առաջարկությունը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

**ՈՐՈՇՎԵՑ՝**

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> կետով, հաստատել ընկերության 2015թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի /հաշվի առած ավելացումները/ 50 %-ը՝ 4134.0 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակցության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5 %-ը՝ 366.0 հազ. դրամն ուղղել ընկերության պահուստային հիմնադրամ.

մնացած՝ 2811.0 դրամը /7311-4134-366/ թողնել որպես չբաշխված շահույթ:

**ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** Լ. ՅՈԼՅԱՆ

**ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** Ռ. ՓԻԼՈՅԱՆ